

ՎԻՊԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

«Սասնա ծռեր» էպոսը, ինչպես յուրաքանչյուր բանավոր ստեղծագործություն, զարգացման երկար ճանապարհ է անցել: Էպոսի բարեշրջումն ընթացել է բոլոր մակարդակներում. կառուցվածքային, կերպարային, սեմանտիկական, ոճական և այլն: Էպոսի կառուցվածքային կազմավորումն ու զարգացումն անցել են արխայիկ-դասական-էպիկական փուլերի հաջորդական շղթայով: Սկզբնական սինկրետիկ առասպելների տրոհման ու հետագա վերակազմավորումների ընթացքում ստեղծվել է մի բանահյուսական հուշարձան, որի տարրերը շարունակում են պահպանել հիմքային առասպելական պատումը, որն էլ արդեն հանդես է գալիս էպիկական, մասամբ պատմական հանդերձով:

Գաղափարական սինկրետիզմը հատկապես առկա է էպիկական հերոսների դեպքում: Հնագույն էպոսների հերոսները գրեթե բոլոր դեպքերում ժամանակային-մշակութային եռաչափ համակարգի կրողն են: Նրանք զարգացման երկար ճանապարհ են անցել՝ արքետիպից մինչև էպիկական-պատմական-գրական: Այս զարգացումն էլ հանգեցրել է նրան, որ այս հերոսներին կարելի է նույնացնել-զուգահեռել թե՛ առասպելական, թե՛ կրոնական-պաշտամունքային, թե՛ պատմական տարբեր կերպարների հետ:

Կերպարային նման ընդգրկումը բնորոշ է հատկապես «մշակութային հերոս» առասպելաբանական կատեգորիային: Մշակութային հերոսը միջին և կապող օղակն է երկրորդ՝ մարդկային-երկրային և երրորդ՝ աստվածային-երկնային աշխարհների միջև: Այդ հերոսը, թեև դրսևորում է աստվածային հատկանիշներ, սակայն գրեթե երբեք պաշտամունքի առարկա չէ: Նա ունակ է վերաճելու աստծու, ինչի շնորհիվ տեղի է ունենում պատումի ու հերոսի սրբացում, բայց հիմնականում կատարվում է հակառակ շարժում, և հերոսը վերածվում է էպիկական-ժողովրդական հերոսի: Նման հետընթաց շարժման պատկերավոր արտահայտությունը Պրոմեթևսի առասպելն է: Պրոմեթևսը մշակույթի պատմության մեջ մնացել է որպես անձնագոհ հումանիստ, որը պատրաստ է հանուն մարդկանց սխրանք գործելու: Նման զարգացումը մշակութային առասպելի էպիկականացման դասական օրինակ է: Բայց նույնիսկ այս դեպքում հերոսը շարունակում է պահպանել նախնական առասպելի տարրերը:

Մշակութային հերոսն իր գործունեությամբ հերոսականությանը զուգահեռ ներմուծում է ստեղծելու, արարելու, կառուցելու մոտիվը: Այս գործառույթի հիման վրա էլ վիշապամարտիկ հերոսները կապվում են մշակութային գործունեության հետ, ինչն էլ նախորդում և նպաստում է նրանց անցմանը էպիկական հերոսի տեսակին: Այս դեպքում ինչ-որ բան կառուցելու, հիմնելու, ստեղծելու, սկզբնավորելու մոտիվը իր հետ բերում է ո-

րոշակի պատմականություն, հաճախ զուգահեռվում ծագումնաբանական (էթիոլոգիական) առասպելներին ու ավանդություններին:

Թեև հերոսը արդեն աստված չէ, բայց ստեղծելու, արարելու գործառույթով նա պահպանում է կերպարի աստվածային սկզբի հիշողությունը: Իսկ ստեղծվող վայրերի պատմականությունը հաճախ հատկապես հին էպոսների դեպքում բավականին խաբուսիկ է, քանի որ արտահայտվում է հիմնականում տեղանունների, մասամբ հերոսների անունների հիշատակմամբ:

«Սասնա ծռեր» էպոսի հերոսների չորս սերունդներն էլ ունեն հերոս տեսակին ընդհանրապես և մասնավորապես մշակութային հերոսներին բնորոշ հատկանիշներ: Նախ՝ արտասովոր ծնունդը (ջրային տարերք, ուժի ցուցադրում բարուրում և այլն), ապա՝ մանկական չարություններ (հովվություն, որսորդություն, հոր, քեռիների սպանություն, կամրջի կառուցում և այլն), մշակութային գործունեություն (Սասնա բերդի կառուցում, որսասարի և վանքի հիմնադրում), տարբեր սխրանքներ, բախում հոր հետ, ապա ողբերգական վախճան: Այս մոտիվային հարացույցը մեր էպոսի ճյուղերում իրացվում է տարբեր պատումներում տարբեր հաճախականությամբ, հաջորդականությամբ ու տեսքով, սակայն ընդհանուր ուրվագիծը գրեթե բոլոր դեպքերում նույնն է:

Առաջին ճյուղի հերոսների մշակութային գործունեության մասին շատ է գրվել: Պատումների մեծ մասում ու հատկապես Սոկաց պատումներում երկվորյակ եղբայրները հիմնում են Սասնա տունը և ստեղծում էթնոսի գոյության կենսական տարածություն ու պայմաններ: Ըստ այդմ էլ՝ սովորաբար առաջին ճյուղի հերոսներն են համարվում մշակութաստեղծ՝ ի տարբերություն հաջորդող հերոսների ու հատկապես կենտրոնական հերոս Դավթի, որն ընդգծված ռազմական-մարտիկային գործառույթներ ունի:

Գործառույթների տեսանկյունից ընդունված է հնդեվրոպական առասպելաբանության հերոսներին ու աստվածներին դասակարգել ըստ Ժ. Դյումենզիլի եռաճյուղ գործառութային հարացույցի¹, որը կիրառվել է նաև մեր էպոսի դեպքում²: Այդ հարացույցը, ըստ Դյումենզիլի, հնդեվրոպական մշակույթի առանձնահատուկ հատկանիշն է, որը ի վերջո հանգում է հասարակության եռամաս սոցիալական կառույցին, որը տեսանելի է հնդկական, իրանական, հունական, լատինական ցեղերի մեջ: Բոլոր հերոսները դասակարգվում են ըստ գերագույն իշխանության, ռազմական և տնտեսական գործառույթների: Որքան էլ ընդգրկուն լինեն այս գործառույթները, սակայն մեր էպոսի հերոսները միանշանակ չեն տեղավորվում տվյալ սխեմայի մեջ, քանի որ տարբեր հատկանիշներ են միավորում: Այսպես, Սանասարը երկվորյակ հերոս է, նաև՝ մարտիկ, Դավիթը մարտիկ է, նաև ունի գերագույն իշխանության գործառույթ, Փոքր Միերին հատուկ են միաժամանակ մի քանի գործառույթներ և այլն:

Բացի նշված տարբերություններից, մեր էպոսի պատումների երեք տիպաբանական խմբերից մեկում նկատելի է հերոսների գործառույթների

¹ Стен Дюмезиль Ж. Верховные боги индоевропейцев. М., 1986:

² Стен У. Սիյան, «Սասնա ծռեր» էպոսը և հնդեվրոպական երեք ֆունկցիաները, «ՊԲՀ», 1985, № 1, Ա. Պետրոսյան, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Եր., 1997:

յուրօրինակ փոխակերպում, որը բնորոշ է ոչ միայն հնդեվրոպական ավանդույթին, այլև հենց մեր էպոսին:

Սասնո տիպաբանական խմբի պատումներում, որոնք հիմնականում գրառվել են շատ ուշ՝ 1970-ական թվականներին, նկատվում են երկրորդ և երրորդ ճյուղերի մարտիկ հերոսներին մշակութային-շինարարական հատկանիշների վերագրման երևույթներ:

Օրինակ՝ հիմնականում ամուսնությունից հետո է իրացվում Մեծ Միերի մշակութային գործունեության մոտիվը, ինչը Սասնո տիպաբանական խմբի պատումների հիմնական յուրահատկությունն է: Պատումների մյուս խմբերում Միերը չունի մշակութաստեղծ գործառույթներ: Թեև երրորդ ճյուղում հիշողության ձևով նշվում են Միերի ստեղծած եկեղեցին և որսասարը, սակայն չկան համապատասխան միջադեպեր: Պատումներում հիշատակվում են Միերի կողմից տարբեր վայրերում հիմնված բերդերն ու վանքը (տե՛ս Սասնա ծռեր, հատ. Բ, մաս Ա՝ Ե, հատ. Դ՝ Ա, Դ, Զ, Թ, ԺԱ)*: Երկրորդ ճյուղում այս մոտիվի իրացումը որոշ դեպքերում պայմանավորված է պատումների կառուցվածքային յուրահատկությամբ: Այն պատումները, որոնք չունեն առաջին ճյուղ, երկրորդ ճյուղում են իրացնում Սասնո տան հիմնադրման մոտիվը (հատ. Դ՝ Ա, Դ, Զ): Ընդ որում, ըստ բանագետ Ա. Սահակյանի՝ սա ոչ թե հետևանք, այլ պատճառ է և բնորոշ է ոչ միայն երկրորդ, այլև երրորդ ճյուղին. «Վեպի բանավոր կերպին խիստ բնորոշ երևույթ է դա, երբ իր դերով ուժեղ կենտրոնական կերպարն իրեն է ձգում միջադեպեր և գծեր այլ կերպարներից: Մեծ Միերն իրեն ձգելով կամ նախապես ունենալով Սասնա բերդի կառուցման միջադեպն ու դերը, երկրորդ պլան է մղել Սանասարին ու Բաղդասարին. Դավիթը, խլելով հորից նրա շինարարական դերը, երկրորդ պլան է մղում Մեծ Միերի շինարարական դերն ու կերպարը»³:

Այդուհանդերձ, միանշանակ չի կարելի նշել այս միջադեպերի Միերի ճյուղում իրացման պատճառը: Այն, որ այս միջադեպերը համակարգային բնույթ են ստացել, ակնհայտ է, սակայն հնարավոր է պարզել՝ սա ծագումնաբանական առանձնահատկություն է, թե կառուցվածքադիպաշարային հետագա խաթարման արտահայտություն:

Նույնը նկատելի է և Դավթի դեպքում: Ի տարբերություն պատումների մյուս խմբերի, որտեղ Դավթի շինարարական գործունեությունը սահմանափակվում է վանքի վերաշինմամբ, այստեղ այն շատ ավելի բազմազան է: Դավիթը հիմնում է ճախրկան գյուղն (հատ. Դ՝ Ը) ու տարբեր քաղաքներ (հատ. Բ, մաս Բ՝ Ե, հատ. Դ՝ Զ, ԺԱ), եկեղեցի և վանքեր (հատ. Դ՝ Ա, ԺԳ, ԺԴ), բերդեր՝ տարբեր վայրերում (հատ. Դ՝ Բ, Գ, Զ, ԺԶ), ջրամբար, ջրաղաց (հատ. Դ՝ Բ, Գ), շենքեր, պարիսպներ (հատ. Դ՝ Գ, Ե), ախոռներ, մսուրներ (հատ. Դ՝ Բ, Գ, Զ), հացի փուռ (հատ. Դ՝ Գ) և այլն⁴:

* Այստեղ և հետայսու փակագծերում տրվող հղումներով նախ տրվում են «Սասնա ծռեր» էպոսի պատումների Ա-Դ հատորները՝ հրատարակված 1936-1999 թվականներին, իսկ շեղատառերով՝ համապատասխան պատումները:

³ Ա. Սահակյան, Սասնա պատումների համեմատական քննություն, «Սասնա ծռեր», հատ. Դ, Եր., 1999, էջ 58:

⁴ Դավթի շինարարական գործունեությունն ընդգրկող միջադեպերի հարացույցը տե՛ս նույն տեղը, էջ 56-57:

Շուրջ մեկ տասնյակ պատումներում իրացվող շինարարական գործունեության միջադեպերը առավելապես նոր են և հանդիպում են միայն այս տիպաբանական խմբում: Պատումներում տարածվածության տեսակետից առավել թվով միջադեպեր կան Սասնո Բ, Գ, Զ (հատ. Դ) պատումներում: Ղազար Տեր-Մկրտչյանի, Վահան Ասատրյանի և Միսակ Յովհաննիսյանի պատումներն այս խմբի ամենից վաղ գրառվածներից են, հետևաբար դրանք կարելի է և ավանդական համարել: Այս դեպքում կարելի է ենթադրել, որ շինարարական գործունեության միջադեպերը ոչ թե շփոթության կամ դիպաշարի վերակառուցման արդյունք են, այլ տվյալ տիպաբանական խմբի համակարգային յուրահատկության:

Ա. Սահակյանը անդրադառնալով Դավթի հատկապես Սասունից դուրս (Յալեա, Դիարբեքիր) ծավալած շինարարությանը, ենթադրում է, որ դա կարող է լինել պատմական հիշողության արդյունք: Ընդհանուր առմամբ, սակայն, այս միջադեպերի առկայությունը բանազետը կապում է ճյուղերի վերախմբավորման հետ. «Դավիթը, իր վրա վերցնելով շինարարական թեմայի շատ միջադեպեր և դեր, մյուս ճյուղերն ու կերպարները գրկում է համապատասխան միջադեպերից և դերից, դարձնում այդ ճյուղերը թռուցիկ, սեղմ և թույլ»⁵: Սակայն եթե Բ և Զ գրեթե միաճյուղ (Միեր-Դավիթ) պատումների դեպքում այս տեսակետը ընդունելի է, ապա նույնը չի կարելի պնդել քառաճյուղ Գ պատումի վերաբերյալ: Այստեղ արդեն Դավթի ծավալած շինարարական գործունեության նկարագրությունը որոշակի հակասության մեջ է մտնում վեպի կենտրոնական հերոսի ավանդական ընկալման հետ և հնարավորություն է տալիս վստահորեն խոսելու Մեծ Միերի և հատկապես Դավթի գործառույթների փոխակերպման մասին:

Անխուսափելիորեն փոխվում է Դավթի՝ որպես ծուռ-խենթի ընկալումը, քանի որ Դավթի և նմանատիպ հերոսների գլխավոր գործառույթը ի վերջո ռազմականն է, այլ ոչ թե տնտեսական-շինարարականը: Այս տեսանկյունից խոսում է Զ պատումի հետևյալ բնորոշումը. «Ուրըշները գասին՝ Դավիթ ծուռը, /Բառաբ գըսեր.-Դավիթ ծուռ չէ, Դավիթ հուռ (փարթամ, զորեղ)ը, /Գոյիններու փրգողը»⁶: Այսինքն՝ նոր միջադեպերով փոխվում է նաև հերոսների ավանդական կերպընկալումը՝ ինչպես ունկնդրի, այնպես էլ ասացողի մեջ: Հերոսը ավելի հարազատ ու մոտ է դառնում ասացող և ունկնդիր գյուղական միջավայրին:

Փոփոխությունները զգալի են նաև դիպաշարի պատճառահետևանքային տրամաբանության մեջ: Այսպես, վեպի ընդհանրական դիպաշարում վանքի վերաշինմանը սովորաբար հաջորդում են թշնամիների կողմից վանքի ավերման և թալանման միջադեպերը: Այսինքն՝ շինարարական գործունեության ավելի ավանդական՝ վանքի վերաշինման միջադեպը վեպի դիպաշարում ունի իր պատճառաբանված տեղը և հաջորդող միջադեպերի համար ծառայում է որպես սկզբնապատճառ:

Այն դեպքում, երբ շինարարական գործունեությունը ներկայացնող նոր միջադեպերը դիպաշարի հետագա զարգացումների վրա ոչ մի կերպ

⁵ «Սասնա ծռեր», հատ. Դ, էջ 58:

⁶ Նույն տեղում, էջ 225:

չեն անդրադառնում, սովորաբար դրվում են ճյուղի վերջում⁷: Այսինքն՝ դրանք դիպաշարաստեղծ գործառույթներ չունեն և կարող էին և չլինել: Այս դեպքում այդ միջադեպերը իսկապես կարելի է նորակառուցումներ համարել, որոնք, այդուհանդերձ, ոչ թե մյուս ճյուղերի կրճատման արդյունք են, այլ, մեր կարծիքով, պայմանավորված են վիպասացների հատուկ սուբյեկտիվ գործոններով: Եզրակացությունը կարելի է փաստել նաև նրանով, որ շինարարական միջադեպերի մեծ մասը նոր է ինչպես այս խմբի, այնպես էլ էպոսի ընդհանրական դիպաշարի համար և չի հանդիպում մյուս պատումներում:

Նոր միջադեպերը Սասնո խմբի պատումները հարստացնում են նոր, բավական ուշագրավ մանրամասներով: Այսպես, Միսակ Յովհաննիսյանի Ջ պատումում հետաքրքիր մանրամասներով ներկայացվում է Դավթի և կոշկակարների, Դավթի Դիարբեքիի բերդը թրով կոկած քարերով կառուցելու, բերդում ոսկե աքաղաղ դնելու, ձեռնափայտը դռան վրա թողնելու և այլն միջադեպերը:

Չեղբուների նոր գործառույթների առաջացումը որոշակիորեն կապված է նաև էպոսի գեղջկականացման հետ: Ուշ գրառված պատումներում էպոսն արդեն գրեթե ամբողջությամբ կորցրել է միջնադարյան էպոսների հերոսներին բնորոշ ասպետականության, ազնվականության հատկանիշները: Սրա փոխարեն էպոսի հերոսները փաստորեն գյուղատնտեսական աշխատանքներ են կատարում: Իհարկե, Դավիթը մինչ այդ էլ նման աշխատանքներ կատարում էր, սակայն դա ժողովրդական հատկապես արևելյան միջնադարյան էպոսների հերոսների կյանքի երիտասարդական շրջանին բնորոշ մոտիվ է: Մասնավորապես, կենտրոնական հերոսի հովվության մոտիվը կա թուրքական ժողովուրդների «Մանաս» էպոսում: Այստեղ նույնպես, ինչպես մեր էպոսի որոշ պատումներում, մանուկ հերոսը վնասում է իր հասակակիցներին, և նրան ուղարկում են գյուղական աշխատանքի: Ինչպես և Դավթին, մանուկ Մանասին նույնպես պատժելու, դաստիարակելու և զբաղեցնելու համար հայրը՝ Ջակիպը, ուղարկում է հովիվ Օշպուրի մոտ: Այստեղ, սակայն, Մանասը իրեն պահում է խանի պես, գյուղացիներին իրենից ցածր է դասում: Հատկանշական է, որ նրանից սկզբում թաքցնում են, որ Օշպուրը հասարակ հովիվ է, այլապես Մանասը չէր էլ գնա նրա մոտ: Անդրադառնալով մեր էպոսի ու «Մանասի» հերոսների այս ընդհանրությանը՝ ուսումնասիրողները ընդգծել են Դավթի կերպարի ժողովրդական բնույթն ու նրա նույնացումը իրեն շրջապատող հովիվներին և, ընդհակառակը, Մանասի կերպարի տիրական գծերը⁸: Շարունակելով Ե. Մելետինսկու տեսակետը, Ա. Եղիազարյանը «Սասնա ծռերի» պոետիկային նվիրված ուսումնասիրության մեջ գրում է. «Բայց Մանասի հովվությունը գիտակցվում է իբրև իրեն անվայել և ստիպողական պարտականություն, նա իշխան է, նա վեր է բոլորից, նա իր էությանը չի կարող հովիվ լինել: Այնինչ Դավիթը հովիվ է, բոլոր հովիվների պես և նրանցից տարբերվում է միայն իր դյուցազնական ուժով»⁹:

⁷ Բացառություն է Բ (հատ. Դ) պատումը, որտեղ դիպաշարը բոլորովին այլ կերպ է զարգանում:

⁸ Այս մասին տես **Мелетинский Е.** Происхождение героического эпоса. М., 1963, էջ 367:

⁹ **Ա. Եղիազարյան,** «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Եր., 1999, էջ 51:

Բացի այս, «Սասնա ծռերը» «Մանասի» հետ համեմատության այլ եզրեր ևս ունի: Մասնավորապես, երկու դեպքում էլ մենք գործ ունենք կենսագրական՝ հորից որդի ժառանգականությամբ զարգացող դիպաշարի հետ: Վերջինիս հետ են կապված նաև առանձին կրկնվող մոտիվներն ու միջադեպերը, որոնց թվարկումը, սակայն, մեր ուսումնասիրության շրջանակից դուրս է:

Գյուղատնտեսական աշխատանքներին հերոսների, մասնավորապես Դավթի, մասնակցությունն ուսումնասիրողները սովորաբար կապում են մեր էպոսին ներհատուկ ժողովրդականության հետ, որը կարծում ենք, մասամբ է ընդունելի, իսկ իրականում առկա է հերոսների գործառույթների որոշակի փոխակերպում:

Նման փոխակերպման արտահայտություն են նաև Դավթի շինարարական գործունեությանը վերաբերող ավանդությունները, որոնք գոյություն են ունեցել էպոսից առանձին: Այդպիսին է Հալեպ քաղաքում Սասունցի Դավթի կառուցած և նրա անունը կրող բերդի շինարարության պատմական հիմքեր ունեցող ավանդությունը: Ըստ Արամ Ղանալանյանի՝ այդ «հիշատակությունը արձագանք է տնտեսական-քաղաքական ու ռազմական այն հարաբերությունների, որ ժամանակին ունեցել են Սասունի բնակիչները Եգիպտոս-Մսրի հետ՝ էյուբյան կամ էտյան հարստության շրջանում (1169-1250 թ.), որի իշխանության մեջ է եղել նաև Հալեպ քաղաքը»¹⁰: Դավթի կառուցած Սասնո բերդի մասին է պատմում նաև Վ. Պետոյանն իր «Սասնա ազգագրությունը» գրքում. «Դավթի բերդը գտնվում է Հալեպում մի բարձր բլրի վրա: Ասում են, թե այս բերդը շինել է Սասունցի Դավիթը: Նա ամեն օր լուսաբացին նստել է Քուռլիկ Ջալալին և մի ականաբար Սասունից հասել է Հալեպ, աշխատել բերդի շինարարության վրա և երեկոյան մի ականաբար նորից վերադարձել Սասուն: Սրա բարձր պարսպից գութանի շղթայով կախված է Սասունցի Դավթի հսկայական գուրզը»¹¹:

Մի ավանդություն էլ կա Փոքր Միերի կառուցած ճանապարհի վերաբերյալ, որը գտնվում է Սասնո բերդի և Քաղքիկ գյուղի արանքում. «Ասում են, թե այս գեղեցիկ ճանապարհը շինել է Սասնա Միերը գայլախագ ու չախմախի քարերերից ու այն ժամանակ, երբ հողը այլևս չի դիմացել նրա ոտքերի տակ: Այս ճանապարհով են երթնելել Միերն ու նրա հաղթանդամ սիրուհին»¹²:

Նոր գործառույթների առաջացումը պայմանավորված է նաև էպոսի հերոսների պատմականացման փորձի, նրանց հետ ասացողների ազգակցական կապերի ստեղծմամբ: Այս դեպքում հերոսի նոր գործառույթները ոչ թե վիպական տեքստի կամ առասպելական մշակութաստեղծ գործառույթների արտահայտություն են, այլ հերոսների կենցաղայնացման: Կենցաղայնացման արտահայտություն են նաև կառուցված շինությունները: Քաղաքների ու պարիսպների կողքին հերոսն արդեն կառուցում է ջրաղացներ, հացի փռեր և այլն: Վիպական աշխարհը «մանրացմանն» ու կենցաղայնացմանը զուգահեռ զրկվում է հերոսական պաթոսից, հերոսների վարքի ըն-

¹⁰ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 6ԺԲ:

¹¹ Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 214:

¹² Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 222:

դուևված նորմերից: Դրանով հերոսը հարազատ է դառնում ասացողին և ունկնդրին, սակայն դադարում է հերոս լինելուց: Հերոսականությունը էպոսի հիմնական հատկանիշն է և արտահայտվում է նրանով, որ հերոսը ռազմիկ է, իսկ ռազմիկությունը գրեթե միշտ տարանջատված է սոցիալական-տնտեսական գործառույթներից: Զրկվելով հերոսականությունից՝ էպոսը զրկվում է իր հիմնական ժանրակազմիչ հատկանիշից:

АЙК АМБАРЦУМЯН – Трансформация функций эпических героев. – Изменение функций, присущих в армянском эпосе богатырям, показывает, как меняется их восприятие. В работе применены структурно-типологический и сравнительно-исторический методы.

Долгая эволюция национального эпоса «Сасна црер» («Сасунские удалыцы») выразилась во многих преобразованиях. Они особенно наглядны в том, как языческие боги постепенно превращались в эпических героев. В итоге последние почти утратили высокий пафос, так характерный для средневековых эпических произведений. В более поздних версиях «Сасунских удалыцов» Мгер Старший и Давид, которые были наделены в основном военными функциями, приобретают и функции культурного героя, становясь пекарем, мельником и строителем и окончательно теряя мифологические черты. Богатыри становятся крестьянами.

Такого рода преобразования уникальны не только для армянской фольклорной традиции, но и для индоевропейской эпикологии. Хотя в «Манасе», эпосе тюркских народов, есть похожие мотивы, но там сельские работы героя носят временный характер. В армянском же эпосе подобные эпизоды показывают отношение героев к крестьянам и любовь народа к своим богатырям.

HAYK HAMBARDZUMYAN – The Transformation of the Functions of Epic Heroes. – During its long evolution the most remarkable work of Armenian folklore, the "Sasna Tsrer" national epic has undergone many transformations. These changes are particularly observed in the case of the epic heroes, who have developed from mythological Gods to epic heroes. In the final stages of their development the epic heroes are almost completely deprived of heroic pathos and nobleness, which are typical to medieval epic works. As a result, in the later recorded versions of "Sasna Tsrer," which emanate from Sasun, the epic hero of the second branch, Great Mher and the protagonist David, who mostly had military functions, acquire cultural-constructional features.

What occurred was a transformation of the functions of the epic heroes.

The epic warrior hero has become a baker, a miller, and a village builder. This is a reflection of the epic heroes' final demythologization. Epic heroes have become peasants.

In the development of epic heroes this is a very interesting and unique phenomenon. This type of transformation is a novelty not only for the Armenian folkloric tradition, but also for the much wider Indo-European convention. It is noteworthy that in the national epic works of Turkish languages, such as the Manas epic, although the characters are engaged in rural work, it is obvious that this is of a temporary nature and the epic hero is still endowed with nobility.

However, this is not the case with the Armenian epic. The peasant narrator recounts these new episodes in order to show the relationship of heroes to the peasants and the people's love for them.

But when the battle ceases, the heroes return to their core functions and to fight for their homeland as real warriors.

Studies of the transformation of the functions of Armenian epic heroes make it possible to better understand the change of the perception of Armenian and neighboring epic heroes.

We investigate the problem with structural-typological and historical-comparative methods at the same time, because we are deal with such structural parts of the text as a motive and with the historical and cultural trends.